ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 841-Ա **«26» մայիսի 2026 թ.**

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ (ՀԱՎԱՍՏԱԳԻՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. մայիսի 18-ի թիվ 395-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու քննության կազմակերպման, անցկացման, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագիր) դադարեցման» կարգի 10-րդ և 11-րդ կետերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագիր) ստանալու համար քննությունների կազմակերպման և անցկացման նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու նպատակով.
    1) Նախարարության անձնակազմի կառավարման վարչությանը՝ 2026թ. մայիսի 26-ից հունիսի 16-ը ներառյալ՝ քսանչորսժամյա ռեժիմով ընդունել

հավակնորդների փաստաթղթերն առցանց՝ https://schoolexams.emis.am/ հղումով:

2) Մինչև 2026թ. հունիսի 30-ը նախարարի հաստատմանը ներկայացնել հավաստագրման ժամանակացույցը:

2. Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու համար հավակնորդների փաստաթղթերի ընդունման մասին հայտարարության տեքստը տեղադրել նախարարության պաշտոնական կայքում:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**